
ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
«ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ 1918-1920 ԹԹ.

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ. Ս.

1917 թ. ռուսական հեղափոխությունն ու դրան հաջորդած տարիները բեկումնային ժամանակաշրջան էին ցարական Ռուսաստանի տարածքում բնակվող ամբողջ հայության համար ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ հոգևոր-մշակութային առումներով: Հետհեղափոխական տարիներին Ռուսաստանի տարբեր երկրամասերում գտնվող հայկական համայնքները թևակոխեցին երկրում ծավալվող ներքաղաքական խմորումների ժամանակաշրջան, իսկ հազարավոր հայ գաղթականներ դեգերում էին Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի այլ մասերում: Առաջին աշխարհամարտի տարիներին սկսված աննախընթաց աշխուժությունն ու ազգային խնդիրների նկատմամբ անթաքույց հետաքրքրությունը համախմբող դեր ունեցավ ռուսահայ գաղթօջախների կարողության, նյութական և բարոյական միջոցների միավորման համար: Վերջինս իր արտահայտությունն ունեցավ տարբեր բնագավառներում՝ միաժամանակ դրսևորվելով նաև գրական-հրատարակչական ոլորտում: Մինչև խորհրդային կարգերի հաստատումն ու ամրապնդումը Ռուսաստանի հայկական կենտրոններում ազգային կյանքի վերելքի պայմաններում ծնունդ առան և որոշակի դերակատարում ստանձնեցին մի շարք նոր հայ պարբերական մամուլի օրգաններ: Այդ տարիներին Մոսկվայում հրատարակվեց հայ պոեզիայի գոհարներից «Поэзия Армении» գիրքը, իսկ Պետրոգրադում լույս տեսավ հայ գրական մի ուրիշ ժողովածու՝ «Армянский сборник»-ը:

Հետագայում խրախուսվեց և անհրաժեշտություն դարձավ Մոսկվայի հայկական հրատարակչության գոյությունը: Հայության համար ստեղծված դժվարին կացությունը ծնունդ տվեց «Армянский вестник» պարբերականի հրատարակությանը:

Մոսկվայի և Պետրոգրադի հայ գաղութների գրական-հրատարակչական վերելքը տարածում ստացավ նաև Դոնի հայ գաղթօջախում: Հանձին «Հայ համայնք» շաբաթաթերթի՝ Դոնի հայ գաղութում նոր լիցք առավ գրական-մշակութային և հասարակական-քաղաքական մտքի զարգացումը: «Հայ համայնք» շաբաթաթերթը խմբագրեցին Դոնի հայ գաղութի նշանավոր դեմքեր Ե. Շահազիզը (բանասեր, մանկավարժ, Համայնական վարչության նախագահ) և Ռ. Բերբերյանը (Համայնական խորհրդի նախագահ): «Հայ համայնք» գրական-հասարակական շաբաթաթերթը 1918-1920 թթ. տպագրվում էր Ս. Ավակովայի տպարանում¹: Չնայած շաբաթաթերթի կարճատև գոյությանը, այնուամենայնիվ, ձևավորվեց ազգային-համայնական մամուլի օրգան, որն առանձնահատուկ դեր ունեցավ գաղութի

¹ Հայ պարբերական մամուլը. Համահավաք ցուցակ (1794-1980) (կազմ. Մ. Ա. Բաբլոյանը), Ե., 1986, էջ 116:

կյանքում: Հանդիսանալով Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ համայնքի պաշտոնաթերթ՝ «Հայ համայնքը» արժարժում էր ամենատարբեր խնդիրներ և իր բաժիններում առանցքային տեղ էր հատկացնում՝

- ա) Համայնական խորհրդի և վարչության գործունեության լուսաբանմանը,
- բ) տեղական կյանքի անցուդարձին,
- գ) կովկասյան (նաև Անդրկովկասի) իրականությանն ու զարգացումներին,
- դ) հայ գաղթականության խնդիրներին,
- ե) Ռուսաստանի տարբեր հայ գաղթօջախների կյանքին,
- զ) մշակութային-կրթական խնդիրներին և այլն:

«Հայ համայնք» շաբաթաթերթի յուրաքանչյուր համարի առանցքային թեմաներից էր համայնական կառույցների գործունեության մանրակրկիտ լուսաբանումը, տարբեր հանձնաժողովների հաշվետվություններն ու առաջարկությունները: Հետաքրքրական է, որ համայնական կառույցների գործունեության լուսաբանմանը նվիրված բաժինը հաճախակի վերնագրված էր «պաշտոնական»՝ ընդգծելով շաբաթաթերթի՝ համայնական կառույցների օրգան լինելու հանգամանքը: Այս բաժնում մանրակրկիտ ներկայացված էր նաև Համայնական խորհրդի և նրա անդամների դիրքորոշումը համայնքային կյանքի տարբեր ոլորտների ու խնդիրների առնչությամբ: Թեև շաբաթաթերթը Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ համայնքի պաշտոնաթերթն էր, խիստ և քննադատական հրապարակումներ տպագրվել է տեղական համայնական կառույցների թույլ գործելաձևի, դանդաղությունների ու վճռականության պակասի մասին: Այդ հրապարակումներով հաճախակի հանդես են եկել գաղութահայ նշանավոր գործիչներ Գր. Չուբարյանը, Ե. Շահագիրը և այլք: Այսպես, «Հայ համայնքի» 1918 թ. հոկտեմբերի 14-ի համարում Գր. Չուբարյանը «Նոր-Նախիջևանի հայությունը» հոդվածում մանրամասնում և բացախոսում է այն հանգուցային խնդիրների մասին, որոնք անհապաղ չլուծելու պարագայում համայնքը «դեռ չծաղկած, կրթառամի իսպառ»: Այդ խնդիրներից էր նաև արդյունավետ և ստեղծագործ աշխատանքի բացակայությունը. «Ինչու՞ մինչև օրս դեռ չենք ձեռնարկել ազգային-համայնական լուրջ վիճակագրութեան, որպեսզի իրազեկ լինենք համայնքիս հայութեան սոցիալական և բարոյական կարողութեան... Ինչո՞ւ այժմանից հենց չենք մշակում ֆինանսական քաղաքականութեան արդար ու լրջմիտ ծրագիրը և պատշաճաւոր պարտադիր կանոններ... Ինչո՞ւ ենք լռութեան տալիս և միանգամայն անկատար թողել համայնքի ներքին իրաւական կազմակերպութեան գործը, առանց որի պատահականութեան է տրուում ամեն մի հասարակական գործ»²: Հոդվածագիրը նշում է, որ այդ քայլերն ամլության են մատնում գաղութի ազգային կյանքը. «...էլ ո՞ր օրւան համար էինք այսքան «աղմուկ-աղաղակ» բարձրացնում, համայնք կազմակերպում... Ժամանակն է, վերջ տանք այս տարտամ-անզգայ կացութեան...»³: Հոդվածի վերջում առաջարկվում էր վերցնել փոխառություն, հիմնել ազգային համայնական համալսարան, ժողովարան-ակումբ, հրատակ գիտակցել, որ ազգային կյանքը «ցամաքում»

² Հայ համայնք, Նոր Նախիջևան, հ. 23, 1918, էջ 330:

³ Նույն տեղում:

է. «...Համայնքին է վիճակւել նոր կեանք, թարմութիւն ներշնչել...»⁴: Համայնական խորհրդի նիստերի լուսաբանումը հույժ կարեւոր էր, քանի որ այն տարածաշրջանում այնպիսի ազդեցիկ հայկական կառույց էր, որի հետ էր նորանկախ Հայաստանի Հանրապետությունը մի շարք ազգային խնդիրների լուծումը կապում: «Հայ համայնքի. 1918 թ. հուլիսի 22-ի համարում գրված է. «1918 թ. յուլիսի 8-ին կայացաւ Նոր-Նախիջևանի Հայ Համայնական խորհրդի նիստը: Նախագահում էր Ռ. Բերբերյանը: Ներկայ են 35 պատգամավոր: Նախագահը ժողովը բանալով յայտարարում է նիստի հետևեալ օրակարգը.

Ուկրաինական կառավարութեան կից Հայաստանի կոմիսարիատի նախաձեռնութեամբ հրաւիրուելիք համագումարի մասին խորհրդակցութիւն և պատգամաւորների ընտրութիւն, ապա անցնելով առաջին հարցի քննարկմանը՝ հայտնում է,- Ուկրաինական կառավարութեան կից Հայաստանի կոմիսարիատի ներկայացուցիչ Ա. Տօնեան, որ ներկայումս այստեղ է, կոմիսարիատի նախաձեռնութեամբ առաջարկում է յուլիսի 10-ին Համայնական խորհրդի ժողովարանում գումարել մի համագումար, որտեղ պիտի մասնակցեն Ուկրաինայի, Ղրիմի, Դոնի և Մոլդաւիայի հայ կազմակերպութիւնների ու կոմիտէների ներկայացուցիչներ՝ վճռելու մի շարք կարեւոր հարցեր, որոնք վերաբերում են թէ վերոյիշեալ պետութիւնների մէջ ապրող հայերի ազգային կազմակերպութիւններին և թէ նորակազմ Հայկական պետութեան ներքին կազմակերպութեան»⁵: Համագումարի աշխատանքների օրակարգը կազմված էր հետևյալ կետերից.

- ա) գերիների և փախստականների հարցեր,
- բ) տեղափոխության կենտրոնների հաստատում,
- գ) ազգային ավտոնոմիա և ազգային բանկ,
- դ) հպատակության հարց:

Այս համագումարին մասնակցելու համար Համայնքային խորհրդին հատկացվել էր տասը տեղ, սակայն համագումարը ձգձգվեց երկաթուղայինների գործադուլի և քաղաքացիական կռիվների ժամանակ ռազմաքաղաքական իրադրության փոփոխությունների պատճառով:

«Հայ համայնքին» աշխատակցելու և դրամական օժանդակություն ցուցաբերելու նպատակով Նոր Նախիջևանի Հայ համայնական վարչությունը 1919 թ. նոյեմբերի 5-ին նամակով դիմել է Դոնի Ռոստովի հայկական հյուպատոս Գրիգոր Չավխուշյանին, որտեղ մասնավորապես ասվում էր. «...ի նկատի առնելով վարչութեանս այն յայտարարութիւնը, որ հիւպատոսութիւնդ միտք է յղացել հրատարակել հայերէն մի թերթ, որ «Հայ համայնքի» հրատարակության վերսկսելով, գուցէ ավելորդ համարւի, քանի որ հիւպատոսարանդ կարող էր հասարակութեանը հայտնելիք հաղորդագրութիւնները տպագրել «Հայ համայնքում», լիազորեց վարչութեանս դիմել հիւպատոսարանիդ, որ սա եղած բացը ծածկելու համար, ամսական մի գումար նպաստ տայ «Հայ համայնքի» հրատարակութեանը, իրաւունք ունենալով իր պաշտօնական հաղորդագրութիւններն տպագրել «Հայ համայնքում»

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, հ. 11, 1918, էջ 137:

եւ մի ներկայացուցչի միջոցով մասնակցելու խմբագրութեան գործերին»⁶: Դոնի հայ համայնքն իր կառույցներով լուրջ դերակատարություն էր ստանձնել նաև հարակից տարածաշրջաններում՝ ՀՀ կառավարության կողմից դիտվելով առանցքային օղակ համախմբելու և լուծելու հրատապ հարցեր: «Հայ համայնքն» իր «Տեղական կյանք» բաժնում լուսաբանում էր Նոր Նախիջևանում և Դոնում գործող բազմաթիվ հայկական կազմակերպությունների, կոմիտեների և հոգաբարձությունների գործունեությունն ու դրանց հաշվետվությունները: Շաբաթաթերթը լայն տեղեկատվություն է ապահովել Նոր Նախիջևանի Բարեգործական ընկերության, Աղքատաց Եկեղեցական Հոգաբարձության, Կարմիր Խաչի՝ Ռոստովի Հայկական Կոմիտեի գործունեության մասին: Դոնի տարաբնույթ հայկական կազմակերպությունների՝ Հայկական Կոմիտեի, Կանանց Խնամատար Ընկերության, Սպառողական Ընկերության, հայրենակցական միությունների և այլնի իրականացրած ծրագրերի և անգամ այդ նպատակով արված ծախսումների վերաբերյալ տեղեկատվությունը առկա էր շաբաթաթերթի էջերում: Բազմաթիվ հրապարակումներում կոչ է ուղղված գաղութահայ հասարակությանը, նրա առողջ ուժերին արթնանալ թմբի-րից, կոտրել հայ միջավայրում առկա գոեհիկ բարքերն ու սովորույթները, անտարբերության մթնոլորտը: «Տեղական կյանք» բաժնում հաճախակի էին նյութեր տպագրվում՝ նվիրված Նոր Նախիջևանի և Ռոստովի հայ ուսանողության, տեղի մշակութային կյանքին: Լայնորեն լուսաբանվում էր Ռոստով-Նախիջևանի թատերական կյանքը, քանի որ տեղի թատերական խմբերը մեծ թիվ էին կազմում, բացի այդ, հյուրախաղերով այստեղ էին գալիս հայտնի կոլեկտիվներ: Այստեղ իրելություններով հանդես է եկել նաև Վ. Փափագյանը. «Յունուարի 9-ին քաղաքային թատրոնում ռուս դերասանական խումբը ներկայացրեց Ալ. Դիմայի յայտնի «Քին» դրաման հինգ գործողությամբ, մասնակցությամբ հայազգի դերասան Վահրամ Փափագեանի»⁷:

Բազմաթիվ էին հոգվածները, որոնք վերաբերում էր գաղութի շրջանակներում անցկացվող միջոցառումներին և հանրային մեծ հետաքրքրություն ունեցող թեմաներին: Ավելի ուշ «Տեղական կյանք» բաժնից առանձին հանդես եկավ «Գյուղական կյանքը», որտեղ հիմնականում լուսաբանվում էին Դոնի հայկական գյուղերի կյանքը: Բազմաթիվ հոգվածներ էին նվիրվում հայկական գյուղերի և հայ գյուղացու առօրեական խնդիրներին, այն է՝ ջրի և առողջապահական հարցերին, մշակութային-կրթական առաջադիմությանը: Այսպես, «Հայ համայնքը» հրապարակել է Մեծ Սալա գյուղում հրատարակվող և Դոնի հայ գյուղական առաջին խմորատիպ շաբաթաթերթի լույսընծայման մասին: Մեծ Սալայի «Գիւղացի» շաբաթաթերթի նախաձեռնողներն էին մի խումբ տեղացի երիտասարդներ՝ Ղ. Պարոնյանը, Վ. Դոմբայանը, Հ. Խոչխարյանը: Շաբաթաթերթը նպատակ ուներ «... պարզել այն բոլոր հարցերը, որոնք այսպես թե այնպես վերաբերում են գիւղին, ժողովրդա-

⁶ **Ղազիյան Ա.**, Վավերագրեր Դրիմ-Դոնյան հայրենակցական միության գործունեության մասին (1919) (Բանբեր Հայաստանի արխիվների, N 1 (107), Ե., 2006, էջ 87), ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, թ. 63:

⁷ Հայ համայնք, հ. 4, 1919, էջ 62:

կանացնել այն բոլոր գաղափարները, որոնք նպաստում են գիղացիության յառաջադիմությանը⁸։ Դոնի հայկական գյուղերի բարեկեցության և առողջապահական նախագուշակական միջոցառումների վերաբերյալ շաբաթաթերթում պարբերաբար հայտնվում էր տեղեկատվություն։ Այսպես, շաբաթաթերթի 1919 թ. թիվ 21-ում տպագրված «Նախագուշացում» հոդվածով «Հայ Համայնքը» դիմում էր հայ գյուղացիներին՝ տեղեկացնելով լայն տարածում ստացող հնդախտի (խոլերա) մասին՝ զգուշացնելով կենցաղում մաքրություն պահպանելու և ուտեստի մեջ չափավոր լինելու անհրաժեշտության մասին. «Այս բոլոր նամանաւանդ պէտք է նկատի ունենան և անշեղ կատարեն մեր գիղացիները, որոնք սովորաբար խրտուրթին չեն դնում եփած և հում ջրի մէջ, կերակրեղէնի տեսակների մէջ, և յատկապէս ուշադրութիւն չեն դարձնում մաքրակենցաղութեան պայմանների վրայ»⁹։

«Հայ համայնքը» անդրադարձել է նաև հայկական գյուղերի դպրոցների վիճակին, դրանց կազմակերպման և ղեկավարման գործին. «Մեր գիւղերը բաղդի բերմամբ ներկայացնում են անկախ հայ համայնքներ, հետևապէս նոքա իրանք պէտք է տանեն իրենց դպրոցական գործը»։ Չնայած սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների առկայությանը՝ այնուամենայնիվ, Դոնի հայկական գյուղերն ու գյուղական կյանքը բավական տպավորիչ էին։ «Հայ համայնքի» 1918 թ. թիվ 8-ում տպագրված «Մի պտոյտ հայ գիւղերում» հոդվածում հեղինակը ուրախությամբ նշում էր Թոփուի-Չալթի գյուղերի բարեկարգ վիճակի մասին՝ ավելացնելով. «Այդ իրար կպած գիւղերը բաղկացած են մօտ-18.000 հայ անխառն ազգաբնակչութիւնից, մի երևոյթ, որը հազաւգիւտ է մեր անմիջիջար հայ իրականութեան նոյն իսկ հայաշատ կենտրոնների համար... Ախտաւոր օտարամոլութիւնը այնքան էլ խորը մուտք չի գործել մեր այդ գիւղերը և ամենուրեք հնչում է մայրենի, թէև աղաւաղված, բայց հարազատ բարբառը»¹⁰։ Հայկական գյուղերի կյանքն ու վիճակը ներկայացնող «Գյուղական կյանք» բաժինը հետաքրքրական և բազմակողմանի տեղեկատվություն էր տալիս՝ վերհանելով դրանցում առկա հիմնախնդիրները։

«Հայ համայնք» շաբաթաթերթը լուրջ ուշադրություն է հատկացրել նաև Կովկասում ծավալված իրադարձություններին։ Շաբաթաթերթի, առանց բացառության, բոլոր համարներում առկա են թղթակցություններ կամ տեղեկատվություն Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում տեղ գտած հասարակական, մշակութային, բայց առավել հաճախ ռազմաքաղաքական անցուդարձի վերաբերյալ։ «Հայ համայնքն» իր էջերում հաճախակի էր արտատպում մամուլում հրապարակված թարմ նորությունները։ Դրանք հիմնականում անդրկովկասյան թերթեր էին, ուստիև ավելի իրազեկ էին տարածաշրջանի իրադարձություններին և ավելի ճշգրիտ տեղեկատվություն ունեին, քան Հյուսիսային Կովկասում և Դոնում հրատարակվող թերթերը։ Հատկանշական է, որ դեռևս 1918 թ. առաջին համար-

⁸ Նույն տեղում, հ. 7, 1918, էջ 89։

⁹ Նույն տեղում, հ. 21, 1919, էջ 335։

¹⁰ Նույն տեղում, հ. 8, 1918, էջ 99։

ներում շաբաթաթերթն ուներ «Լուրեր Կովկասից» բաժինը, իսկ տարեվերջին, երբ կար արդեն Հայաստանի Հանրապետությունը, առանձնացվեց «Լուրեր Հայաստանից» բաժինը, որի թղթակցությունները վերաբերում էին հանրապետությունում և նրա շուրջ ծավալվող իրադարձությունների լուսաբանմանը:

«Հայ համայնքը» բազմիցս անդրադարձել է հայ-վրացական, հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններին, լուսաբանել ՀՀ կառավարության և իշխանության մյուս մարմինների գործունեությունը, ընդունված որոշումների, երկրի առջև ծառացած խնդիրների շոշափմանն ու քննարկմանը: Հայաստանին և Անդրկովկասին վերաբերող տեղեկությունները մեծ մասամբ այստեղ հրատարակվող մամուլից էին քաղված, որոնք շատ հաճախ արտատպվում էին մեծ ուշացումներով, որովհետև կապի և տեղեկատվության, երթևեկության անկանոն վիճակն ու դրանց հաճախակի բացակայությունը արգելք էին դառնում ժամանակին արձագանքելու այս կամ այն իրադարձությանը: Այսպես, Բաքվի հայկական կոտորածների մասին «Հայ համայնքի» 1918 թ. հոկտեմբերի 21-ի համարում գրված է. «Երկար ժամանակ Բազուի մասին տեղեկություն չունեինք, նոր միայն ստացանք Թիֆլիսից հայ և ռուս լրագիրներ, որոնցից իմացանք այնտեղ անցած դարձածի մասին: Անցեալ սեպտեմբերի կիսին թուրքերին վերջապես յաջողում է առնել քաղաքը»¹¹: Այնուհանդերձ, շաբաթաթերթն իր համարներում պարտադիր կերպով պահպանել է Անդրկովկասում կատարվող իրադարձությունների լուսաբանմանը նվիրված էջը: «Հայ համայնքի» խմբագրությունը այս առնչությամբ, մասնավորաբար, իր 1918 թ. հուլիսի-8-ի համարում գրում է, որ ստացել է բազմաթիվ դիմումներ իր ընթերցողներից առ այն, որ «...թերթում հայկական կենտրոններում կատարուած անցուդարձի մասին հարուստ տեղեկություններ չենք տալիս»¹²: Շաբաթաթերթի խմբագրությունը իր ընթերցողների դիմումներին ի պատասխան, գրել է. «Այսու խմբագրութիւնս պարտք է համարում յայտնել բոլոր ընթերցողներին, որ այդ պակասը շատ լաւ զգում է ինքը, բայց եթէ մինչեւ այժմ չի լրացրել, միմիայն շնորհիւ բոլորի համար պարզ այն պատճառով, որ Անդրկովկասի հետ յարաբերութեան ոչ մի հնարաւորութիւն չկայ»¹³:

«Հայ համայնքի» խմբագրությունը խուսափում էր չճշտված տեղեկատվություն հրապարակելուց. «Հրապարակի վրայ գտնուող թերթերին որքան էլ թոյլատրելի լինի այս և այն պատահական ստացած լուրերը տպել, այդ բանը թոյլատրելի չէ համայնքի պաշտօնական օրգանին»¹⁴: Ավարտելով իր պատասխանը ընթերցողներին՝ խմբագրությունը նշում էր նաև, որ անպատասխանատու լուրերը մեծ վնաս են հասցնում շաբաթաթերթին, իսկ ստուգված լուրեր ստանալն անհնարին է, ուստի պահանջել անկարելին պետք չէ: Վերոհիշյալը խոսում է «Հայ համայնքի» խմբագրության լրջմիտ գործելաոճի և պատասխանատվության գիտակցման մասին:

¹¹ Նույն տեղում, հ. 24, 1918, էջ 342:

¹² Նույն տեղում, հ. 9, 1918, էջ 106:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

Հայ գաղթականության խնդրի լուսաբանումը «Հայ համայնքի» էջերում զբաղեցրել է առանցքային տեղ, քանի որ այն հրատապ լուծումներ պահանջող և խիստ արդիական թեմա էր։ Առաջին աշխարհամարտի տարիներին իր հայրենիքում ցեղասպանության ենթարկված հայության փրկված բեկորները, հախուռն կերպով տեղաշարժվելով նախ Անդրկովկաս, ապա նաև Հյուսիսային Կովկաս, հայտնվել էին օրհասական վիճակում՝ չունենալով սնունդ, հագուստ և տանիք։ Բոլոր համարներում էլ մեծ տեղ են զբաղեցնում հայ գաղթականության անմխիթար վիճակի վերաբերյալ հոգվածաշարերը, նրանց հոգսերը թեթևացնելուն ուղղված կոչերը։ Շաբաթաթերթը լուսաբանել է նաև Վրաստանի և Ադրբեջանի վերաբերմունքը դեպի հայ գաղթականները, ինչպես նաև նրանց փրկելու «արինաձոր» Հայաստանի քայլերը։ Այսպես է ներկայացրել հայ գաղթականության սոսկալի իրականությունը շաբաթաթերթը «Դեպի Ռուսաստան» վերնագրված իր հոգվածներից մեկում։ «Ու գաղթականութեան միակ երազը, միակ տենչն է փախչել Կովկասից, հեռանալ որքան կարելի է շուտ, գնալ Ռուսաստան։ Ռուսաստանն այժմ փրկութեան յուսոյ միակ նշոյլն է ամբողջ փախստական հայութեան համար։ Ու անցնում են, չնայած Կովկասից Ռուսաստան անցնելն այժմ կապւած է հեքիաթային դժարությունների հետ»¹⁵։ «Հայ Համայնքի» շնորհիվ հնարավոր է որոշակիորեն խոսել ոչ միայն գաղթականության տեղաբաշխման շրջանների, այլ նաև գաղթի հիմնական ուղղությունների ու թվի, տեղերում ձեռնարկված օգնության վերաբերյալ։ Շաբաթաթերթում գաղթականներին օժանդակելու կոչերով հանդես են եկել տեղերում գործող հայկական կառույցները, այսպես, Նոր Նախիջևանի Հայկական Կոմիտեի նախագահ Ս. Ոսկանյանի կոչը՝ «Բաց նամակ հայ հասարակութեան», որտեղ խոսվում է Նոր Նախիջևանում կուտակված, փողոցներում և եկեղեցու բակում խոնված գաղթականներին օգնելու մասին։ Հայկական Կոմիտեի նախագահը կոչ էր անում մեղադրելու փոխարեն աջակցել հայկական հաստատություններին ավելի կազմակերպված ու նպատակաուղղված լուծելու գաղթականության խնդիրները. «Բացի բնակարաններից փախստականներից շատերը չունին շորեր, կօշիկ, անկողին և ճաշ պատրաստելու ամանեղէն։ Այս բոլորը հոգալ Հայկական Կոմիտեի ուժերից վեր է»¹⁶։ Հայ հասարակությանն ուղղված Հայկական Կոմիտեի վերոհիշյալ դիմումն ավարտվում էր հետևյալ տողերով. «Մենք յուսով ենք, որ ով որ խիղճ ու սիրտ ունի, նա անտարբեր չի մնալ մեր կոչին և իւր կարողութեան չափով օգնութեան կրհասնի իւր կարօտաւոր հայ եղբօրը»¹⁷։

Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում ապաստանած տասնյակ հազարավոր հայ գաղթականների խնդիրների վերաբերյալ ՀՀ Խնամատարության նախարարին էր ներկայացվել ընդարձակ զեկույց, որում արտացոլված էր փախստականների կյանքի լիակատար պատկերը՝ ամբողջ տարվա կտրվածքով։ Վերոհիշյալ զեկույցի օրինակը, որի հեղինակն էր Կարմիր Խաչի Ռոստովի Հայկական Կոմիտեի և Ամերիկյան Կոմիտեի լիազոր Հովսեփ Թադևոսյանը, տպագրված է

¹⁵ Նույն տեղում, հ. 21, 1918, էջ 303։

¹⁶ Նույն տեղում, էջ 307։

¹⁷ Նույն տեղում։

«Հայ համայնքի» 1919 թ. հունիսի 2-ի համարում: ՀՀ Խնամատարության նախարարին ուղղված զեկուցագրից պարզ է դառնում, որ. «Առաջին փախստականները Հիւսիսային Կովկասում յայտնուել են 1918 թ. մայիսի 18-ին»¹⁸, այսինքն՝ թուրքական արշավանքի օրերին: Զեկուցագրում մանրամասն նշվում է փախստականների գաղթի ուղիները՝ Թիֆլիս, ապա Ռազմավիրական ճանապարհով մինչև Վլադիկավկազ, որտեղից էլ ցրվում էին զանազան կողմեր. «...Ժամանակ է լինում, որ Վլադիկավկազում հաւաքված-խոնուած են լինում 30-40 հազարանոց փախստականների մի հոծ բազմութիւն»¹⁹: Փախստականների կրած նյութական և ֆիզիկական գրկանքներին ավելանում էին գաղթի ճանապարհին նրանց վրա լեռնականների հարձակումները (մասնավորապես՝ ինգուշները), տրանսպորտային միջոցների արհեստական թանկացումները և տուրքերը: Գաղթի առաջին շրջանում, շնորհիվ անգլիական և ամերիկյան նյութական աջակցության, տեղի հայկական կոմիտեներին հաջողվել է կանոնավոր կերպով դիմավորել և տեղավորել փախստականներին, որը շարունակվում է «...մինչև որ փախստականների բնակած տեղերում սաստկանում են քաղաքացիական կռիւները կամաւոր բանակի և մեծամասնականների մէջ, երբ Հիւսիսային Կովկասի քաղաքներն ու գիւղերը փոփոխաբար ձեռքից-ձեռք են անցնում և Ամերիկացիք թողնում են Վլադիկավկազը»²⁰: Հայ փախստականները հայտնվում են քաղաքացիական կռիւների թոճուքում. «Մի տեղ միմեանց դէմ մաքառող ոյժերի կողմից ենթարկւում են նրանք բռնի զինւորագրման, միւս տեղ հարկադրական աշխատանքի-խրամատներ փորելու, պատնէշներ կանգնելու...»²¹: Այսպիսի ծանր և հարկադրական աշխատանքներից խույս տալով՝ հայ գաղթականությունը ստիպված էր լինում տեղից տեղ շարժվել և ցրվել ամբողջ Հյուսիսային Կովկասով մեկ. «Փախստականների հոսանքը հասնում է մի կողմից - Գրոզնի Գեօրգիէսկ և Պետրովսկ, միւս կողմից - Լուզանսկ Իւզովկա, Մակիեւկա, Ենիքեօյեւկա, Կերչ, Մարիուպոլ, և Ազով, երրորդ կողմից էլ - Նովորասիյսկ, Եկատերինոդար ու Դոն»²²:

Դոնի հայ գաղութի կյանքի լուսաբանումից բացի, «Հայ համայնքը» հաճախակի է անդրադարձել նաև տարբեր հայ գաղթօջախների, համայնքների հասարակական-քաղաքական և մշակութային կյանքին: Այդ տեղեկատվությունը առավել հաճախակի էր Դոնին մոտ գտնվող հայաբնակ տարածաշրջաններից՝ Կուբանից, Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից, Ղրիմից, Ուկրաինայից և այլն: Լայն տեղեկատվություն է ապահովվել այս տարածաշրջաններում գործող հայկական տարաբնույթ կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Հատկանշական է, որ վերոհիշյալ տարածաշրջաններում գործող հայկական կառույցներն ու հիմնարկներն իրենց գործունեության դաշտի և ուղղությունների վերաբերյալ հրահանգավորվում էին Ռոստովից կամ Թիֆլիսից, ինչն էլ հեշտացնում էր նրանց ձեռնարկումների լուսաբանումը «Հայ համայնքի» էջերում: Այսպես, շաբաթա-

¹⁸ Նույն տեղում, հ. 17, 1919, էջ 263:

¹⁹ Նույն տեղում, էջ 264:

²⁰ Նույն տեղում, էջ 265:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 264:

թերթը, լուսաբանելով Ղրիմի հայության դիրքորոշումը ազգային խնդիրների առնչությամբ, գրում է. «Հունար 13-ին Սիմֆերոպոլում գումարեց Տարիկեան (բացի Ղրիմից նաև 3 գավառները մասնակցում էին, որ հիմա Ուկրաինային էին անցել) նահանգի հայկական հերթական (վերջինը 1917 թ. դեկտ. 18-ին) համագումարը: ...Համագումարը գտաւ, որ ազգի դրութիւնը «շատ փափուկ է և վտանգի ենթակայ»²³: Շաբաթաթերթն իր հաջորդ համարներում ևս անդրադարձել է ղրիմահայերի համագումարին՝ արդեն ներկայացնելով դրան հաջորդած գործնական քայլերը. «Կոմիտէներ հիմնեցին Տարիկի հետևեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում՝ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Եալթա, Սուդակ, Եւպատորիա, Ղարասուբագար, Ջանկոյ, Հին-Ղրիմ, Սուբաշի, Կերչ, Թեոդոսիա, Արմեանսկ և Մելիտոպոլ»²⁴:

Ներկայացնելով անօգնական գաղթականների թշվառ վիճակը՝ շաբաթաթերթն իր մեղադրանքն է ուղղում պարտականություններից և խղճից թերացողներին, խույս տվողներին. «Հարց է ծագում. իսկ ի՞նչ են անում Ղրիմի տեղական հայերը. մի՞թէ նրանց խիղճը մեռել է, ամօթը կորել, ինչո՞ւ օգնութեան չեն հասնում իրենց տառապող եղբայրներին. մի՞թէ չկան կազմակերպութիւններ, գաղթականութեան օգնող կոմիտէներ...»²⁵: Քննադատությունից հետո շաբաթաթերթի տխուր եզրահանգումն է. «...ի՞նչ կարող են անել կոմիտէները: Մի քանի անձնուրաց մարդասեր անհատներ, հաւաքւած իրար գլխի, աշխատում են օգնել գաղթականութեան ծով կարիքներին... Իրողութիւնն այնքան է թշուառ ու ծանր, կարիքն այնքան է մեծ ու սոսկալի, որ այդ օգնութիւնը մի կաթիլ է ծով կարիքի մէջ»²⁶: Շաբաթաթերթն իր այս թղթակցության ավարտին նշում է, որ չպետք է թույլ տալ հուսալքությանն ու հիասթափությանը գլուխ հանել, այլ «Պէտք է շուտափոյթ կազմակերպել Ղրիմի քաղաքները, կապ հաստատել նրանց մէջ, միջոցներ հաստատել, որ ձմրանը չմնայ գաղթականութիւնը անտէր և անօգնական»:

«Հայ համայնքի» էջերում լուսաբանվում էր նաև քաղաքացիական կռիվների մեջ ներքաշված Կովկասի այս կամ այն կենտրոնի հայ ազգաբնակչության իրավիճակը: Այսպես, Արմավիր քաղաքի շուրջ ընթացող կռիվների վերաբերյալ շաբաթաթերթը իր համարներից մեկում հստակորեն նկարագրում էր քաղաքի հայ բնակչության վիճակը. «...ամենքը թագնուած էին տանը, մանաւանդ հայերը, որոնք սարսափած վերջին կոտորածից՝ շատ չէին ուզում երևնալ հրապարակում, որովհետև կուի ժամանակ մի քանի անգամ բոլշևիկ զինուորները շրջապատելով բազարը բռնում էին մասնաւորապէս հայերին և քշում առաջին խրամատները, իսկ յարձակման ժամանակն ալ յատկապէս հայերին առաջ էին քշում, անդադար նախատինքներ շարտելով հայերի հասցէին»²⁷:

Ներքաղաքական պայքարի տարիներին Ռուսաստանի մյուս հայաբնակ կենտրոնների հայության կյանքի բազմաթիվ խնդիրներ ևս արծարծվել են շաբաթաթերթի էջերում:

²³ Նույն տեղում, հ. 9, 1918, էջ 114 :

²⁴ Նույն տեղում, հ. 11, 1918, էջ 140:

²⁵ Նույն տեղում, հ. 21, 1918, էջ 304:

²⁶ Նույն տեղում, էջ 304-305:

²⁷ Նույն տեղում, էջ 306:

«Հայ համայնքը» բազմաթիվ հրապարակումներ է նվիրել Դոնի և մյուս հայ գաղթօջախների մշակութային-կրթական, ազգային լեզվի պահպանման հրատապ խնդիրներին: Այսպես, շաբաթաթերթի 1918 թ. հուլիսի 15-ի համարում մի քանի ծավալուն հոդվածներ են տպագրվել վերոհիշյալ խնդիրների մասին, բացի այդ, ներկայացվել է Համայնական խորհրդի նիստերից մեկի օրակարգը, որն ամբողջությամբ նվիրված էր պետական դպրոցներում հայոց լեզուն պարտադիր դարձնելու նախագծին և Պոպովի դպրոցի խնդրին: Տվյալ շրջանում Համայնական խորհուրդը ստանձնել էր դպրոցների վերահսկողության դերը և հոգաբարձուներից նյութական միջոցներ հավաքելու գործը: Պոպովի դպրոցի խնդրով զեկուցող Ե. Շահագիզը Համայնական խորհրդի նիստում, ներկայացնելով դպրոցներին տրվող օժանդակությունների չափը, եզրահանգում է. «Ներկայումս դպրոցի բիջեն աւելանալով և ժառանգներից (Պոպովի) օժանդակութիւն չստանալով դպրոցի հոգաբարձութիւնը որոշել է եկող ուսումն. տարուանից դպրոցը փակել»²⁸: Նույն նիստի ժամանակ անդրադարձ է արվել նաև «Հայ համայնքի» եռամսյա հաշվետվությանն ու աստիճանաբար աճող ծախսերին: Շաբաթաթերթն սկսել էր աշխատել վնասով, ինչը պատճառ էր թղթի գների թանկացման, սակայն տպագրությունը շարունակվելու էր. «...թերթի գոյութիւնն անհրաժեշտ է: Ներկայումս տարածում է 800 օրինակ: Եթե 10 րուբլու փոխարէն ընդունուի 7 րուբլի, մնացեալ բացը կարող է ծածկել Համայնական խորհուրդը»²⁹: Շաբաթաթերթի բաժանորդագիրը կազմում էր 5 ռուբլի: Անընդունելի համարվեցին գոյացած ֆինանսական բացը ծավալի կրճատման, հայտարարություններ տպելու հաշվին ծածկելու մասին առաջարկությունները:

Շաբաթաթերթի վերոհիշյալ համարում տպագրված «Հայ ուսուցչութիւնը եւ դպրոցները» հոդվածն արտացոլում էր ժամանակի ծանր իրականությունը, հասարակության անտարբերությունը ուսուցչության և դպրոցի հանդեպ. «... երկու սուրբ, նուիրական գաղափարներ, որոնք, դժբախտաբար, հասարակութեան կողմից մինչեւ այժմ դեռ չեն գնահատւած ըստ արժանւոյն»³⁰: Հոդվածագիրն այնուհետ ներկայացնում է այն տխուր պատկերը, որում հայտնվել էին Թեմական դպրանոցն ու Գոգոյան օրիորդաց գիմնազիան. «Երկուսն էլ կանգնած են ահռելի վտանգի առաջ, որ կարող է նրանց կուլ տալ, եթե տեղիս ամբողջ հայութիւնը օգնութեան չհասնի»³¹: Ներկայացնելով դպրոցների անցած ուղին, նրանց կատարած լուսավորչական դերը համայնքի կյանքում՝ թախանձագին կոչ էր ուղղվում գաղութահայությանը՝ բարոյական պարտքի գիտակցումով անտրտունջ վճարել Համայնական խորհրդի սահմանած տուրքը՝ փրկելու փողոցին զոհ գնացող մատաղ սերնդին: Հարկ է գիտակցել խնդրի լրջությունը. «...նրա վրայ մատի արանքով նայելը մահացու յանցանք է»³²: Հոդվածագիրը վերջում հույս էր հայտնում, որ հայությունը, համենայն դեպս, փորձ կանի լարելու իր ուժերը և կփրկի դպրոցները:

²⁸ Նույն տեղում, հ. 10, 1918, էջ 125:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 128:

³¹ Նույն տեղում, էջ 129:

³² Նույն տեղում:

Շաբաթաթերթի նույն համարում լույս տեսած «Հայերենի դասաւանդութեան թերի կողմը» հոդվածում առաջ է քաշվում լեզվի ճիշտ արտաբերության խնդիրը գաղութահայ դպրոցներում. «Հայոց լեզվի դասաւանդութիւնը գաղութիս մէջ և շրջակայքում մի զգալի բաց ունի, որ մինչև այժմ մեր դասատուների ուշադրութիւնը գրեթէ չի գրաւել և կամ, եթէ գրաւել է, չի բուժել»: Հոդվածագիրը, շարունակելով միտքը, գրում է. «Նախիջևանի և շրջակայքի հայերի արտաբերութիւնը (акцентъ) պղծուած է օտար լեզուների ազդումից. նա կորցրել է իւր ազգային-լեզուական առանձնայատկութիւնները և ենթարկւել է ֆօնետիկական աղճատման»³³: Ընդգծելով նախիջևանահայերի այս յուրահատուկ և արդեն արմատացած արտաբերության մասին՝ հոդվածագիրը նկատում է, որ այն թէև ընդհանրապես վերացնել անկարելի է, բայց, մասնավորապես, դրպրոցական սահմաններում հնարավոր է: Հայոց լեզվի արտաբերության վիճակը գաղութահայ դպրոցներում շտկելու համար հակաթոյն կարող էր հանդիսանալ ֆօնետիկայի կիրառումը. «Մեր դասատուների մի մասը ինքնին զուրկ է մաքուր հայկական արտաբերութիւնից, իսկ միւսը, եթէ վայելում է այդ լեզուական հարստութիւնը, բաժին չի հանում իւր սաներին»³⁴: Հոդվածագիրն ուշադրություն էր հրավիրում այն դառն իրականության վրա, որ, տարիների ընթացքում յուրացնելով մայրենի գրական լեզուն և բառապաշարը, աշակերտը դպրոցից դուրս է գալիս. «...առանց ընդունակութիւն ունենալու հնչիւնները ջոկել (պ-բ, կ-գ, տ-դ, ծ-ձ, ճ-ջ)»³⁵:

«Հայ համայնքի» նույն համարի «Մեր բարքերից» հոդվածն արծարծում է հայեցի կրթության և դաստիարակության խնդիրներ՝ ազգապահպանման ու ազգային մտածելակերպի տեսանկյունից: Հոդվածում ոճիր է համարվում մանկան հոգուն հարազատ մայրենի լեզվից, նույն մայրենի լեզվով խոսելու և մտածելու հնարավորությունից զրկելը. «Մեր մէջ խոր արմատացած է այն տգեղ ու գոեհիկ հասկացողութիւնը, որ իբր թէ պիտանի մարդ դառնալու համար մանկանը անպայման օտար կրթութիւն է պէտք»³⁶: Շարունակելով միտքը՝ հոդվածագիրը մատնանշում է այն խաթարված բարքերը, երբ հայերեն վատ խոսողի վրա նայում են ներողամտորեն, որոշ դեպքերում դա իբր ապացույցն է նրա կրթված լինելու, իսկ փոխարենը մահացու մեղք է համարվում ռուսերենի մէջ սխալ ունենալը. «Սակայն տրագէդիան նրանումն է, որ մի փոքրիկ բացառութեամբ, դուք չէք գտնիլ հայ ուսուցիչ, հայ քահանա, հայ մտաւորական, մի խօսքով հայ հասարակական գործիչ, որ զաւակին հայկական դպրոց տար»³⁷: Սա ժամանակի հայ իրականության ամենացավոտ կողմերից էր ու տարօրինակ այս երևույթի պատճառն ակնկալելու հույսով հարց էր ուղղվում հայ մտավորականությանը. «Թե՞ հայ դպրոցը, հայ գիրն ու գրականութիւնը լաւ է ու յանձնարարելի միայն այն ժամանակ, երբ ուրիշի համար է»³⁸: Հոդվածի վերջում նշվում էր, որ այս ամենից հետո պահանջել լուրջ ուշադրություն

³³ Նույն տեղում, հ. 10, 1918, էջ 129:

³⁴ Նույն տեղում, էջ 130:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 127:

³⁷ Նույն տեղում, էջ 127-128:

³⁸ Նույն տեղում, էջ 128:

դեպի հայ դպրոցը, գիրն ու գրականությունը, փաստորեն, անհեթեթություն է, հետևաբար, գանգատվել, որ հայ ժողովուրդը խորթանում է, օտարանում, պետք չէ. «...մեր հայ կեանքին գոյն տուողը, հայ դպրոցներին կօնտինգենտ տուողը հայ գիւղերն են, և եթէ այդ գիւղերը դադարեն այստեղ աշակերտութիւն ուղարկելուց, Ն-Նախիջևանը կդադարի հայկական կենտրոն դառնալուց»³⁹: Վերոհիշյալ խնդիրները համայնքային կառույցներում առավել սրությամբ քննարկվեցին նաև հետագայում. «Քանի որ մենք դեռևս չունենք այնպիսի մի հաստատութիւն, որ կարողանար ամբողջովին դպրոցական գործի ղեկավարութիւնը իւր ձեռքըն առնել, մեր բոլոր հասարակական հաստատութիւնների վրայ բարոյական պարտք կայ դպրոցների ապահովութեան գործում մասնակցութիւն ունենալու: Դժուար է երեւակայել, որ Նախիջևան-Ռոստովի նման մի մեծ գաղութ չունենայ այնքան բարոյական ոյժ, որ կեանքի, այս ժամանակաւոր անկանոնութեան պահին մատաղ սերնդի դաստիարակութեան գործը աչքաթող անի և չը հասցնի մինչև կեանքի նորմալ դրութեան»⁴⁰:

Շաբաթաթերթում առկա և համալրվող նորանոր բաժիններից բացի, տպագրվում էին համայնքի ականավոր գործիչների հոդվածաշարեր, որոնք վերաբերում էին հայոց պատմությանը, մշակույթին, միջազգային հարաբերություններին և այլն: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ե. Շահագիզի «Հայերն ու վրացիները» հոդվածաշարը, որը բացահայտում էր երկու հարևան ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունները ժամանակակից փուլում: Հայ-վրացական հարաբերությունները անդրկովկասյան խնդիրների համատեքստում և առաջին հանրապետության շրջանում լրջորեն քննարկվել, դիտարկվել են «Հայ համայնքի» էջերում: Այդ ժամանակաշրջանի հիմնախնդիրները շատ հարցերում բնորոշ են նաև հայ-վրացական ներկա խնդիրներին: Հենց դրանում է նյութի վերհանման կարևորությունը:

Առաջին աշխարհամարտի վերջին՝ ռուսական հեղափոխությունից հետո, Անդրկովկասում ստեղծվել էր պայթյունավտանգ իրադրություն, սրբվել էին ազգամիջյան հարաբերությունները, արտաքին ռազմաքաղաքական վիճակը: Վրացթաթարական շրջանակների որդեգրած հակահայ դիրքորոշումը Անդրկովկասի իշխանական համակարգերում՝ Օզակոմում, Կոմիսարիատում, Մեյմում, բացահայտ էր: Այն, ընդհանուր գծերով, շարունակվեց նաև նորանկախ հանրապետությունների կազմավորումից հետո: Այս շրջանում սկսված վրաց շովինիզմի սլաքն ուղղված էր նախևառաջ հայերի, ապա նաև Վրաստանի մյուս ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, ռուսների դեմ: Հայ-վրացական կնճռոտ փոխհարաբերությունների և վրաց քաղաքական էլիտայի ակնհայտ հակահայ տրամադրությունների, քայլերի բացահայտմանն էր միտված Ե. Շահագիզի «Հայերն ու վրացիները» հոդվածաշարը:

Ե. Շահագիզն իրավամբ գրում է, որ հայերն իրենց լավագույն ներկայացուցիչների բերանով բազմիցս նշել են և քարոզել կովկասյան ազգերի համերաշ-

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, հ. 21, 1919, 326 էջ:

խության կարևորության գաղափարը, թեև պատմական հանգամանքների բերումով մահմեդականների հետ հաշտ լինել չէին կարող. «...բայց ընդհանրապես մեղմ դիրք են բռնել (հայերը - Հ. Ա.) և հաշտեցուցիչ եղանակ ընտրել, միշտ աչքի առաջ ունենալով Կովկասում ստեղծված ազգերի փոխյարաբերության փափուկ վիճակը, որ այդպիսի վեճերից ու բանակռիներից կարող էր չարաչար փորձությունների հանդիպել»: Հայերի հանդեպ վրաց պետական շրջանակների քայլերն ուղղված էին քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում մեծ դիրքերի հասած Վրաստանի մեծաթիվ հայ ազգաբնակչության թուլացմանն ու աստիճանական դուրսմղմանը երկրից: Ե. Շահագիզն ուղղակիորեն նշում է, որ Վրաստանում ապրող մեծաթիվ հայ ազգաբնակչությունը այդտեղ է տեղափոխվել հազարամյակների ընթացքում, սոցիալ-քաղաքական պայմանների բերումով. «Վրացիք չեն ուզեցել հասկանալ, որ հայ մտաւորականութիւնը և գործիչները չեն ցանկացել և չէին էլ կարող ցանկանալ, որ հայերը թողնեն իրանց մայր երկիրը և տեղափոխւեն Վրաստան ու լցնեն նրա քաղաքներն ու գիւղերը, որի հետևանքով պիտի պակասէր, ցանցառանար հայ բնակչութեան խտութիւնը, հոծութիւնը Հայաստանում և, ընդհակառակը, շէնանար, զարգանար օտար երկիրը, նամանաւանդ որ այդպիսի դէպքերում երկրից սովորաբար դուրս է գալիս ժողովրդի աւելի աչքաբաց, աւելի ձեռնարկու ոգի ունեցող տարրը»⁴¹: Շարունակելով միտքը՝ հոդվածագիրը գրում է, թե ինչ կարող էին ասել հայի հոգուն Թիֆլիսը, Գորին, Սդնախը, Թելավը, Վրաստանի այլ վայրեր, կամ ինչ շահ ունեին հայաստանցիք նրանից, որ Սոլովակի լավագույն տները հայերին էին պատկանում, որ Թիֆլիսի քաղաքային դուրման հայերի ձեռքին էր, քաղաքագլուխը՝ հայ. «...այնինչ Վրաստան փոխադրված հայերի տներն ու կալվածները բուն երկրում՝ Երեւանում, Ագուլիսում, Նախիջևանում հետզհետեւ անցնում էին օտարների ձեռքը»⁴²: Ինչ վերաբերում էր Վրաստանում կյանքի և ապրուստի միջոցներ փնտրող հայության հոսքին, ապա վրացիները չեն ուզում հասկանալ հետևյալը. «...Վրաստանը հայերով լցնելու ձգտումը չէ, որ Տաճկահայաստանից երբեմն գաղթականներ են եկել, բնակւել Թիֆլիսում և այլ տեղեր, այլ ապրուստ և գործ գտնելու յոյսը»⁴³: Անդրադառնալով վրացական քաղաքականությանը՝ հայերի հանդեպ Վրաստանի անկախության հռչակումից հետո ընկած շրջանում, Ե. Շահագիզը գրում է. «Վրաստանը անկախ հասարակապետութիւն հրապարակելով իրան, կազմում է իւր կառավարութեան դաշիխճը, որը հէնց առաջին քայլերից ցոյց է տալիս այնպիսի թթու ազգայնական շովէն ու հակադեմոկրատիք գործունէութիւն, որ զարմացնում է բոլոր շրջանները: ...վրացիք դէն ձգելով իրանց երեսից կեղծ սոցիալ-դեմոկրատութեան դիմակը, դուրս են գալիս ասպարէզ իբրև զուտ վրացի ազգային գործիչներ հակահայ և հակառուս գործելակերպով»⁴⁴:

⁴¹ Նույն տեղում, հ. 21, 1918, էջ 302:

⁴² Նույն տեղում, էջ 303:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, հ. 23, 1918, էջ 331:

Իր հողվածներում շարունակելով մերկացնել վրացիների հակահայ դրսևորումները՝ հեղինակը նշում է, որ քրիստոնյա վրացիներից հետ չէին մնում նաև մահմեդական վրացիք՝ աջարները, որոնք, օգտվելով ռուսական զորքի՝ Օլթիից ժամանակավոր հեռանալուց, միանալով թուրքերին, բարբարոսաբար սրի քաշեցին Շավշեթի հայ գյուղացիներին՝ սպառնալիք ստեղծելով Արդվինի և Արդանուջի հայության գոյությանը: Այնուհետև, երբ ռուսները վերստին առաջ շարժվեցին, ու սկսվեց տեղացի ապստամբ մահմեդականների դատը, վրացի գործիչները նույնիսկ արդարացնում էին նրանց, ցուցաբերում իրավաբանական օգնություն: Մատնանրշելով վրացիների հակահայ դիրքորոշումը, Կովկասում թաթարների հետ ունեցած նրանց դաշինքն ընդդեմ հայերի՝ Ե. Շահագիզը թվարկում է այն ծրագրերի ու խնդիրների տապալումը կամ, պարզապես, հակահայ դրսևորումները, որոնք իրականացրել են վրացիները. Անդրկովկասում «գեմատվո» մտցնելու ծրագիրը, Բրեստի զինադադարից հետո վրաց-թաթարական պնդումը՝ Անդրկովկասն անջատել Ռուսաստանից, Տրապիզոնի բանակցությունները թուրքերի հետ, որի հետևանքով գրավվեցին հայաբնակ տարածքներ, հայերից պահանջվեց հանձնել Կարսը և այլն:

«Հայ համայնքի» հաջորդ համարներում ի ցույց է դրվում Վրաստանի անկախության հռչակումից հետո ստեղծված նոր իրավիճակում վրաց ղեկավարության հակահայ քայլերի նոր ալիքը: «Վրաց նորակազմ կառավարության այդպիսի շովեն գործելակերպից տուժում են Վրաստանում ապրող և ռուսները, և նամանաւանդ հայերը, որոնցից լրիւ վրէժխնդիր լինելու պատեհ ժամանակը վրացիք հասած են համարում: Եւ ստեղծուել է Բակուրեանի, Յարսկի Կոլոդցի և Նաթթուլի հայ փախստականների այն դժոխքը, որի թոյլ ու հարևանցի նկարագրութիւնը միայն կարողալիս, մարդ փշաքաղում է և մազերը դիզանում գլխին,- գրում է Ե. Շահագիզը, շարունակելով,- Վրաց կառավարության բերան պաշտօնական «ըՏԲՖՈՈ» թերթը հաղորդում է, որ Վրաստանի հողի վրայ ներկայումս գտնւած 200.000 հայ փախստականներից օրական մեռնում են քաղցից և հիւանդութիւնից հազար հոգի, գլխաւորապէս երեխաներ»⁴⁵: Մեջբերելով վրաց կառավարության պաշտոնաթերթի տվյալները՝ Ե. Շահագիզը մեղադրում է իրենց դեմոկրատ հռչակած վրաց իշխանություններին՝ Բակուրիանի լեռներում փախաբալաքցի փախստականների ճանապարհը փակած վրացական գվարդիայի գործողությունների, ինչպես նաև Արեշի ու Նուխու հայ փախստականներին՝ Ալազանի և Նաթթուլի «300-րդ վերստ» տեղանքում հավաքելու, միայն լոբաջրով կերակրելու քայլերի մեջ:

Ե. Շահագիզը փորձում է վերհանել հայ-վրացական գժտության պատճառը⁴⁶: Եզրափակելով միտքը՝ նա իր սուր և ուղղամիտ գրչով բացահայտել է վրաց կառավարության իրական գործելաճը, որը «...արտաքուստ ձեւացնելով իրան դեմոկրատ ընդհանուր մտքով, ներքուստ

⁴⁵ Նույն տեղում, հ. 24, 1918, էջ 351-352:

⁴⁶ Նույն տեղում, հ. 25, 1918, էջ 364:

մնացել է զուտ վրացի, մի կողմ դնելով սոցիալ-դեմոկրատությունը եւ գործելով միայն եւ միայն յօգուտ իւր ազգի շահերի»⁴⁷:

Շաբաթաթերթի էջերում այսպիսի առանցքային խնդիրների լուսաբանումն ու շոշափումը ինքնին խոսում են նրա հասարակական-քաղաքական նշանակալի դերակատարման մասին:

«Հայ համայնքի» հոգևոր-մշակութային գործունեությունը ծանրակշիռ ներդրում էր ոչ միայն Դոնի հայ գաղթօջախի, այլ նաև ամբողջ Հարավային Ռուսաստանի հայ համայնքների հոգևոր-լուսավորական, հասարակական-քաղաքական մտքի զարգացման ասպարեզում: Կյանք մտնելով բարդ ու ցնցումներով լի ժամանակաշրջանում՝ «Հայ համայնքը» իր կարճատև գոյության ընթացքում (1918-1920 թթ.) ստանձնեց և պատասխանատվությամբ կատարեց իր գործը՝ շարունակելով Դոնի հայ մամուլի ավանդույթները՝ միաժամանակ իր մեջ ամփոփելով ժամանակի շունչն ու ազատ միտքը: «Հայ համայնքը» ունեցավ իր ուրույն տեղն ու ձեռագիրը, սակայն ինչպես և մյուս հայկական համայնքային պարբերականները, սա ևս 1920-ականների սկզբին դադարեց գոյություն ունենալ. վրա էր հասնում խորհրդահայ մամուլի ժամանակը:

НОВО-НАХИЧЕВАНСКИЙ ЕЖЕНЕДЕЛЬНИК “АЙ АМАЙНК” В 1918–1920 ГГ.

АЛЕКСАНИЯ О. С.

Резюме

После революции 1917 г. армянские общины бывшей Российской империи оказались в совершенно новой общественно–политической и культурно–духовной ситуации. За короткий период – с 1917 по 1920 гг., до установления и упрочения Советской власти, все армянские общины, в частности на Дону, пережили период национального возрождения. Армянская община Дона была сформирована на основе Нахичеванской–на–Дону “Армянской общины”, представлявшей интересы армянского населения, проживающего в южных регионах России. С 1918 по 1920 гг. община издавала еженедельник “Ай Амайнк”, который сыграл огромную роль в консолидации донского армянского населения, поднимая животрепещущие вопросы в самой общине и за ее пределами.

Еженедельник отличался своеобразием стиля и новизной мышления. В связи с изменением политической ситуации в стране после 1920 г. журнал перестал издаваться, ему на смену пришла армянская советская печать.

⁴⁷ Նույն տեղում, էջ 363: